

# ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1973 — 1974

### Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Ս

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,  
Հոգեւորականներ,  
և յարգելի հանդիսականներ.

Աստուծոյ ողորմութեամբ զգրոցական տարի մը եւս կը բոլորենք (1973-1974) որուն կրթական - բարոյական - անտեսական համարատուութիւնն է որ կը կատարենք այս-

Երկրորդական կարգեր	27 մանչ
Նախակրթարան	80 մանչ
Մանկապարտէզ	26 մանչ

որ, այս հանդիսաւոր առիթով:

Անցնող տարւոյս ընթացքին մեր վարժարանի աշակերտութեան ընդհ. թիւը եղաւ 260, բաժնուած հետեւեալ ձևով.

36 աղջիկ	համագումար՝	63	
64 աղջիկ	համագումար՝	144	
27 աղջիկ	համագումար՝	53	
		Ընդհ. թիւ աշակերտութեան՝	260

Այս թիւէն 220ը Երուսաղէմի Հայ դպրոց-թի դասկներն են, իսկ մօտ 40ը Թուրքիոյ ներքին գաւառներէն, ՀայՓայէն և Բեթղեհ-հէմէն եկած զիշերօթիկ աշակերտներ, որոնց համար մեր վարժարանը նախախնամական դեր մը կը կատարէ, անով որ այս փոքրիկները իրենց բնակավայրերուն մէջ ոչ մէկ առիթ ունին հայեցի դաստիարակութեան: Ահա թէ ինչո՞ւ անոնք Թարգմանչաց Վարժարանով ոչ միայն կը ստանան երկրորդական հիմնական դաստիարակութիւն մը, այլև իրենց հոգին ու միտքը կը ձեւաւորուի հայեցի ոգեկանութեամբ ու դրոշմով, ու անոնք իրենց բնակավայրերը կը վերադառնան զբրապէս այլափոխուած հոգիով ու նկարագրով:

Ուսուցչական կազմ.—

Մեր կրթական զորքին մէջ մեզի օժանդակ ունեցանք 26 հոգինոց ուսուցչական խումբ մը, որոնք հոգեւին, եռանդով և նրբօրումով կատարեցին իրենց ծառայութիւնը մեր վարժարանին և անոր աշակերտութեան:

Այս առթիւ զնահատանքի և ջերմ շնորհակալութեան խօսքեր ունինք միայն, մեզի զործակից այս ընտիր կազմին:

Այս առթիւ շէնք կրնար լուծեամբ անցնել յիշատակին առջևէն մեր Մանկապարտիզպանուհի Օր. Տիգրանուհի Նալպանտեանին, որ 55 տարիներու շատ նուիրեալ ու զբնահատելի ծառայութենէ մը յետոյ, 1973-ի Նոյեմբեր 7-ին մտաւ իր յախտենական հանդիսար: Աւելորդ չըլլար յիշատակել թէ Ս. Աթոռը և Վարժարանս իր ամբողջական կազմով իրեն համար սարքեցին շատ փառաւոր ու բացառիկ թաղում մը: Սակայն իր անզարձ մեկնումով մեր բոլորին հոգիէն ներս

Տարւոյս ընթացքին մեր աշակերտութեան վարժն ու բարքը եղած է զնահատելի և շէնք ունեցած երբեք կարգապահական դժուարութիւններ:

ձգեց անդամանելի բաց մը, որ արդասիքն էր իր երկար տարիներու ուսուցչական ծառայութեան, բացառիկ սիրոյն և նուիրումին: Երուսաղէմահայ մեր համայնքին մէջ շատ քիչ են անոնք, որոնք իբրև իր աշակերտները վայելած չեն իր սէրը, դուրսըրանքն ու իր դաստիարակութեան բարիքները:

Յրհնութիւն իր յիշատակին և հանդիսա իր հոգւոյն: Այս առթիւ պիտի խնդրէինք որ Հոգւոց մը արտասանուէր իրեն համար:

Մեր կրթական ծրագիրը.—

Ինչպէս նախորդ տարիներուն՝ հայկական երկրորդական արդիական վարժարանի մը ծրագիրն էր: Հետևաբար դասաւանդուեցան ըստ նախընթացի Հայերէն (Գրարար և Աշխարհարար), Անգլերէն, Երբայեցերէն և Արարերէն չորս լեզուներ, Հայագիտութիւն (Հայ գրականութիւն, Պատմութիւն, Արուեստներ, Կրօն), Գիտութիւններ (Մաթեմատիք, Կենսաբանութիւն, Քիմիաբանութիւն, Բնագիտութիւն):

1974 Յունուար 2-13 տեղի ունեցան մեր կիսամեայ քննութիւնները, իսկ 1974 Մայիս 20-31 մեր ամալիքի քննութիւնները, որմէ յետոյ մեր աշակերտութեան կրթական յաջողութեանց պատկերը կ'ըլլայ հետևեալը.—

- 6 հոլիներ կը կրկնեն իրենց դասարանը,
- 60 հոգիներ ունին վերաքննելի դանազան դասեր,

մնացեալները յաջողութեամբ կը փոխեն իրենց դասարանները:

Իսկ հետևեալ աշակերտները յաջողութեամբ աւարտելով մեր երկրորդական վարժարանը, քիչ յետոյ կը ստանան իրենց աւարտական վկայականները Չերդ Ամենապատուութեան ձեռքով:

- Արրահամ Եւմէտեան
- Աւետիս Գալպեան
- Եղիա Թումայեան
- Երուանդ Սահակեան
- Վաչէ Երկարեան
- Մարի Թումայեան
- Մարի Հայկալեան
- Ռոզին Գամաբեան
- Սեդա Արսէնեան

- Սոնա Անտոնեան
- Սոնա Կարմանապեան
- Սոսի Տաղլեան
- Վերա Մնացականեան
- Ֆիլիմ Գանգաշեան

Այս շրջանաւարտները մասնակցեցան նաև 1974 Յունիսի G.C.E.ի (General Certificate of Education) անդլիական երկր. վարժարաններու յատուկ քննութեանց, որոնց արդիւնքները կը հաղորդուին մեզի յառաջիկայ Սեպտեմբերին:

Իսկ անցեալ տարւոյ մեր շրջանաւարտները որոնք մասնակցեցան G.C.E.ի քննութեանց, հետևեալ յաջողութիւնները ունեցած են.

Գեղանոյշ Ռաֆայեան յաջողած է 6 նիւթերու մէջ

- Դասական Հայերէն - Գրարար
- Արարերէն լեզու
- Անգլերէն Գրականութիւն
- Ուսողութիւն
- Քիմիաբանութիւն
- Բնագիտութիւն

Մելիքի Բէվրանեան յաջողած է 5 նիւթերու մէջ

- Դասական Հայերէն - Գրարար
- Արարերէն լեզու
- Ուսողութիւն
- Ընդհ. Աղոցց Պատմութիւն
- Բնագիտութիւն

Մարիաննա Քարոտասոփոլոս յաջողած է 4 նիւթերու մէջ

- Յրանսերէն լեզու
- Ուսողութիւն
- Քիմիաբանութիւն
- Բնագիտութիւն

Յակոբ Պէննէեան յաջողած է 1 նիւթի մէջ

- Արարերէն լեզու

Այս առթիւ մասնաւոր դահուանակութեամբ յիշատակելի պարտաւայ մըն է, որ ներկայ տարւոյս շրջանաւարտներէն Սեղա Արսէնեան և Վաչէ Երկարեան անցեալ Յունուարին մասնակցեցան Հայերէն, անգլերէն և ա-

բարերէն լեզուներու G.C.E.ի քննութեանց եւ հետեւեալ յաջորդութիւնները ունեցան .

Սեղա Արտէմեան  
Հայերէն լեզու  
Անգլերէն լեզու  
Արարերէն լեզու

Վաչէ Երկաթեան  
Արարերէն լեզու

Ըստ նախընթացի շարունակեցինք ազճրկանց եւ արոց յատուկ Ֆիզիքական դաստիարակութեան եւ մարզանքի ամենօրեայ պահերը, ինչպէս նաև ազճիկներու յատուկ ձեռագործի ամենօրեայ պահերը :

Մեր խնդրանքին ընդառաջելով, տեղւոյս քաղաքապետարանի կարգադրութեամբ եւ ծախսով բժշկական պաշտօնեաներու շարժական աշխարհութեամբ, յատուկ խնամքի առարկայ բրինձ մեր սաներու առողջական վիճակը : Այս առթիւ շնորհակալութեան խօսք ունինք նաև տեղւոյս քաղաքապետարանին :

Իսկ Կիրակի եւ տօնական օրերուն հոգեկան դաստիարակութեան մտածումով մեր աշակերտները առաջնորդեցինք կեկղեցի ու Մտունդի ե Չատկի առիթներով ստացան նաև Ս. Հաղորդութիւն :

Տարւոյս ընթացքին ունեցած ենք հետեւեալ հասութարեր կամ դպրոցական ձեռնարկները :

ա. 1974ի Ամանորի առիթով Կիրակի, Յունուար 6 ունեցանք ամբողջօրեայ խրատձանքի ձեռնարկ, ուր ճոխ ճաշատեղաններու շուրջ հասարակեցան մեր դպրութի բոլոր անդամները երգի ու պարի շէնչող միջոցառումով : Զեռնարկէն վարժարանս ունեցաւ Իսր. 3887 լիբրօի հասոյթ մը :

Մայրերու Օրուան տօնակատարութիւն.—

Նախաձեռնութեամբ Երկրորդական Ե. դասարանի ազճկանց բաժնին, Մարտ 20-ին կատարուեցաւ Մայրերու օրօշուան տօնակատարութիւնը : Հրախրուած էին դպրութիւն բոլոր մայրերը :

Թէ՛ ձեռնարկին դպրափարը եւ թէ՛ անոր գեղարուեստական իրադրութեամբ դովելի նախաձեռնութիւն մըն էր, որը այնքան շնոր-

հալիօրէն կատարեցին նախաձեռնողները, որոնք արժանացան անխափ բոլորի գոհունակութեան :

բ. 1974 Մայիս 18 եւ 19 Շարաթ եւ Կիրակի օրերուն ունեցանք մեր տարեկան պաղարը, ուր վաճառքի դրուեցան մեր սանուհիներու ձեռագործները, ու դարձեալ կերտխումբի ճոխ սեղաններու շուրջ մեր ժողովուրդը ունեցաւ երկօրեայ խրատձանք երգով ու պարով : Պագարը վարժարանին ապահովեց շուրջ Իսր. 10,000 լիբրօի հասոյթ մը :

գ. Մայիս 12ին ունեցանք Վարժարանի տարեկան մարզահանդէսը, ուր մեր երկսեռ աշակերտութիւնը, առաջնորդութեամբ բարձրի գոյգ ուսուցիչներուն, կատարեց մարզախաղերու ցուցահանդէս մը, ի ներկայութեան ժողովուրդի խուռն բաղմութեան :

դ. 1974 Յունիս 2, Կիրակի, տեղի ունեցաւ Մանկապարտէզի ամառըճի հանդէսը ի ներկայութեան ձեռնողներու : Այս առթիւ 15 փոքրիկներ ստացան մանկապարտէզի աւարտական միայականներ, շարունակելու համար իրենց ուսումը մեր նախակրթարանի բաժնին մէջ :

ե. 1974 Յունիս 15, Շարաթ երեկոյան տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական բաժնի աւարտական հանդէսը Զեռք Ամենապատուութեան նախագահութեան տակ : Այս հանդէսը նուիրուած էր Սասունցի Դաւիթ զիւցաղնավէպի գրի առման հարիւրամեակին (1873-1973) :

Այս առթիւ մեր Վարժարանի աւարտական դասարանի սաները երեք կարճ դասախօսութիւններով ներկայացուցին Սասունցի Դաւիթ զիւցաղնավէպի բանասիրական ու ազգագրական նշանակութիւնը, ու կատարեցին նաև արտասանութիւններ Սասունցի Դաւիթէն :

Հանդէսի վերջաւորութեան շրջանաւարտ դասարանի 14 սաներ ստացան իրենց աւարտական միայականները :

Այստեղ մասնաւոր խոնդովաւութեամբ պէտք է յիշատակենք որ 1973-74 դպրոցական տարեշրջանի սկիզբը, 3 ամիսներու շինարարական աշխատանքէ մը վերջ, մեր դպրոցական շէնքը ունեցաւ շատ կարեւոր յաւելում մը :

Մեր Վարժարանի արեւելեան թիւին միայն աւելցաւ 3 նոր դասարաններու բաժին մը,

իսկ արեւմտեան թեւին վրայ դանուղ սրահը վերածուեցաւ 3 դասարաններու : Նորոգուեցան ու ընդարձակուեցան երկու թեւերուն միջեւ դանուղ դասարաններն ու ուսուցչարանը , եւ ամբողջ վերնայարկը իր եօթը դասարաններով յատկացուեցաւ մեր վարժարանի երկրորդական բաժնին : Անոնք բարձրն ալ լուսաւոր , օդաւէտ , արեւոտ դասարաններ են , ամբողջ երբուսազէ՛մ քաղաքին վրայ հսկող սրանշէլի դիրքով մը եւ մեր զպրօցական աշակերտութեան բարեկեցութեան համար շատ աջքառու նուաճում մը : Շինուածական այս յաւելումը միւս կողմէ՛ մեզի կարելիութիւնը տուաւ որպէ՛սզի մեր Մանկապարտէզը եւս զպրօցիս դետնայարկէն եւ անոր անբարենպաստ պայմաններէն ազատագրուի եւ փոխազրուի վերնայարկ : Իսկ Վարժարանիս դետնայարկը վերածուեցաւ ընդարձակ տարրալուծարանի մը , ուր կառուցուեցաւ նաեւ փորձարկութեանց ընդարձակ սեղան : Այժմ կրնանք ըսել թէ՛ մեր Վարժարանը կառօյցի տեսակէտէն ունի

երկրորդական վարժարանի յատուկ ընդարձակ եւ բարենպաստ պայմաններ :

Շինուածական այս շատ նշանակելի գործը իրականացաւ բարեբարութեամբ Գեորգանիոյ Պանն քաղաքի Evangelische Zentrastelle fւր Entwicklungshilfe E. V. եկեղեցական կազմակերպութեան , որ այս նպատակին համար մեզ յատկացուց Իւր . լիբօզ 108,358.92 ակօրայի նուիրատուութիւն մը :

Այս առթիւ յանուն Վարժարանիս Տեսչութեան , ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կը յայտնենք երախտագիտութեան եւ շնորհակալութեան զգացումներ : Անոնք ոչ միայն մեծապէս սատարեցին մեր զպրօցի հոգեւոր-կրթական գործին մեծհոգի այս ձեռնտուութեամբ , այլև երբուսազէ՛մ Ս . Քաղաքի մէջ , Սիւնի նուիրական բարձունքին վրայ ունեցան յաւերժական յիշատակարան մը :

Այժմ կը ներկայացնենք մեր Վարժարանի տնտեսական տեղեկագիրը :

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 1973 — 74 ԳՊՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ

1973 Յունիս 1 — 1974 Յունիս 30

Մ Ո Ւ Տ Ք

Ի . Լ .

Պատրաստ ի դրամարկ փոխադրեալ 1972—73 զպրօցական տարեշրջանէն	259.62
Նուիրատուութիւնք արտասահմանէն	104.764.30
Տարեբօշակօ աշակերտներէ	55.180.50
Դասագիրքերէ եւ դասատետրերէ	5.670.00
Հանդէսներէ եւ ձեռնարկներէ	5.041.00
Հանդէսներէ մուտք	400.00
Օրացոյցներէ (զուտ շահ)	694.00
Նոր Տարւոյ խրախնամէնք	3887.00
	<hr/>
	5041.00
Բացառիկ մուտքեր	3.326.50
Նուիրատուութիւն կրօնից Նախարարութենէն	472.50
Մեքենաներու համարու ծախք կիլոյէնկեան	
Հաստատութենէն	1554.00
Վաճառուած վաւարաններէ	1000.00
Վերաճնուրեանց տարբեր	300.00
	<hr/>
	3326.50
Համագումար մտից՝	<hr/>
	174.241.92

Ե Լ Ք

		Ի. Լ.
Ամսական պաշտօնէութեան 1973 Յունիսէն — 1974 Յունիս		157-165-00
Դասագիրքեր եւ դասատետրեր		5-348-70
Գրեկական պիտոյք		194-00
Թղթատարական ծախքեր		1-057-50
Չեռագործի միւրեղէնք		1-021-50
Մանր ծախքեր		539-00
Տպագրական ծախքեր		1-018-00
Շինուածական եւ կահոյից նորոգութիւն		3-372-00
Վառարաններ	1145-00	
Վարագուրցու	173-00	
Վարագոյրի երկաթ ձողեր	700	
Tape recorder մը	320-00	
ալլիւալլ մանր նորոգ.	1034-00	
	<hr/>	3-372-00

Բացառիկ ծախքեր եւ պատուասիրութիւնք		530-30
Հանդիսական առիթներով եղած ծախքեր		318-00
	<hr/>	170-564-00
Համագումար ելից՝		
Պատրաստ ի դրամարկ փոխանցելի 1974—75 դպր. տարեշրջանի		3-677-92
		<hr/>
		174-241-92

*Մեր զպրոցական առօրեայ հաշուեկշիռէն դուրս կատարած ենք նաև հետեւեալ գործառնութիւնք Ս. Թարգմանչաց Վարժարանի վերնայարկի շէնութեան առիթով, և որուն մանրամասնեալ հաշուետուութիւնք վաւերացրելով միասին կատարած ենք թէ՛ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ թէ՛ Evangelische Zentralstelle fur Entwicklungshilfe E. V. կազմակերպութեան:*

Մ Ո Ի Տ Ք

Evangelische Zentralstelle fur Entwicklungshilfe E. V. կազմակերպութեան		
կատարած նախատուութիւն		108-358-92
	<hr/>	108-358-92

Ե Լ Ք

Յանձնառու Յարուհ Գարաէնին վճարեալ		97-000-00
Յանձնառու Յարուհ Գարաէնին տանիքի պալատ		1-900-00
Այէտ եւ Հասան (ֆարքուր փոխադրութիւն)		1-850-00
Ճարտարագետ Մուսալլամին հսկողութեան եւ բլաններու		1-500-00
Ճարտարագէտ Նալի Բիմաուիին պէրօնէ տանիքի բլանի պատրաստութիւն		500-00
Քաղաքագետարանին բլաններու ֆննութիւն եւ պէրօնի հսկողութիւն		284-00
Լուսանկարներու		451-50
Բեռնակիրներու		100-00
Միջնորմ մը ֆակելու		250-00
Ապակի 30-00, կրածեփ 400-00		
Ներկ եւ կրածեփ, 600-00		1-030-00
Խոզավակներու 60-00, ելեկտրական գործեր 100-00		160-00
Նոր դրամ մը բացում, 180-00		
Վարագոյրներու տախտակեայ կախիչներ 700-00		880-00
Գրատախտակներու շինութեան		2-400-00
Ատաղճագործական աշխատանքներ		300-00
		<hr/>
		108-605-50
		<hr/>
		108-358-92
		<hr/>
		246-58

Ինչպէս կ'երեւի մեր ընդհ. հաշուեփակէն, վճարելի կը մնան մեր ասուցիչներու ամառնային արձակուրդի Յուլիս, Օգոստոս ամսուան ամսականները, որոնք պիտի աշխատինք յաջորդ տարեչջջանին փակել:

Ինչպէս կը տեսնէք մեր հաշուետուութենէն, Վարժարանիս անտեսական ծախքերը ապահովող կարեւորագոյն մուտքը նուիրատուութիւններն են: Մեր նուիրատուներու այս ազնիւ եւ բնաւիբ շարքը անխնայութեամբ բարեկամներու այն խումբն է, որոնց կը պարտինք մեր զպրոցական բարեք կեանքն ու յաջողութիւնները: Ստորեւ կու տանք անոնց անուններն ու նուիրատուութեանց քանակը ու իրենց համար կը հայցենք Աստուծոյ օրհնութիւնը:

Տիկ. Ազնիւ Հանրելեան, Մ. Ն.	105-00
Արգարեան Աւանդի Մարմին, Լոնտոն	5350-00
Տիկ. Մարգրիտ Առաքելեան, Երուսաղէմ	100-00
Յ. Ա. Ունեան, Լոնտոն	160-00
A. C. Y. O. Union City	125-00
Տիար Սարգիս Ճգնաւորեան, Մ. Ն.	100-00
Օր. Քէրի Քէշիշեան, Մ. Ն.	615-00
Կիւլլապի Կիւլլապեան Հաստատութիւն, Մ. Ն.	4170-00
Տիկ. Տօլօրէս Լէյպման, Մ. Ն.	1470-00
Կրօնից Նախարարութիւն, Երուսաղէմ	1352-50
Տէր. Ֆրէս Ասատուրեան, Մ. Ն.	100-00
Տիար Ստեփան Բանիկեան, Աստրալիա ՌեՆՐՈՒԱ, Երուսաղէմ	200-00 814-80
Տիկ. Էլիզապէր Պերպլերեան, Մ. Ն.	420-00
Տիար Արգար Զաքարեան, Հայփա	100-00
Տիկ. Վիրնիմիա Ճիզմէնեան, Մ. Ն.	80-00
ՀՕՄ, Երուսաղէմ	500-00
Ալիս եւ Նորայր Մատանեան, Մ. Ն.	107-00
Կիրակոսեայ Վարժարան Վան Նույսի, Մ. Ն.	215-00
Տիար Ֆրէնց Պէլլերեան, Մ. Ն.	107-00
Տիկ. Մարգրիտ Թորոսեան, Մ. Ն.	215-00
Օր. Նոյեմի Պերպլերեան, Մ. Ն.	107-00
Տիար Տիրան Էօմիրեան, Մ. Ն.	215-00
Արմենակի եւ Աւետիս Սվանեան, Մ. Ն.	107-00
Տիար Մարքիս Արգարեան, Մ. Ն.	430-00
Տիար Հայկ Ճիզմէնեան, Մ. Ն.	107-00
Եկեղեցատէր Տիկեանց Միւրաբիւն, Մոնրթլոյ Մի Ոմն	130-00 10-00
Տիար Սարգիս Քիրքեան, Լոնտոն	150-00
Տիար Գեորգ Քիրքեան, Լոնտոն	150-00
Տիար Յովհաննէս Քիրքեան, Լոնտոն	150-00
Տիար Կարպիս Քէլմիզեան, Լոնտոն	300-00
Տիար Աւետիս Քէլմիզեան, Լոնտոն	150-00
Տէր եւ Տիկ. Ա. Բարեգոնեան, Մ. Ն.	112-00
Տիկ. Ազնէս Գլընեան, Մ. Ն.	112-00
Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Ալիս Թաշեան, Մ. Ն.	225-00
Օր. Հէլէն Յակոբեան, Մ. Ն.	224-00
Տէր եւ Տիկ. Ճօզէփ եւ Էլսի Զալմերս, Մ. Ն.	337-00

Օր. Մէրի Թուայեան, Մ. Ն.	112-00
Տիկ. Նորա Մարշ, Մ. Ն.	112-00
Տիկ. Ֆլորա Թումպուլեան, Մ. Ն.	112-00
Տիկ. Պլանշ Կրանտ, Մ. Ն.	112-00
Հայ Եկեղեցի Թէնէֆլայի, Մ. Ն.	225-00
Տէր եւ Տիկ. Ճօրն Ստեփան, Մ. Ն.	102-00
Տիար վարդգէս Միւռոյեան, Մ. Ն.	225-00
Տէր եւ Տիկինն Եղուարդ Մարտիկեան, Մ. Ն.	4500-00
Տէր. եւ Տիկ. Ճ. Եագուպեան, Մ. Ն.	112-00
Տիկ. Բուրուլ Սարափեան, Մ. Ն.	112-00
Տէր եւ Տիկ. Եղուարդ Տուրեան, Մ. Ն.	112-00
Տէր եւ Տիկ. Վահան եւ Յասմիկ Ներսէսեան, Մ. Ն.	225-00
Տէր եւ Տիկ. Արա Հայկ, Մ. Ն.	225-00
Կիրակնօրեայ վարժարան Սաուր Միլվոֆի, Մ. Ն.	112-00
Տիար Վահրամ Ազապապեան, Մ. Ն.	112-00
Տիար Վաղարշակ Ազգեան, Մ. Ն.	112-00
Տիար Արշի Բազլայեան, Մ. Ն.	112-00
Տիար Լեւոն Պալեան, Մ. Ն.	135-00
Ռէլիքիէի Տիկնանց Միւրքիւն, Մ. Ն.	112-00
Տիկ. Արօլօնիա Սողիկեան, Մ. Ն.	112-00
Տէր. Ճօրն Քիւրանեան, Մ. Ն.	102-00
Կիրակնօրեայ վարժարան Սանթա Գլարայի, Մ. Ն.	102-00
Տիկ. Թագուհի Գանիէլեան, Մ. Ն.	112-00
Տիկ. Ռօզ Զարդարեան, Մ. Ն.	156-00
Ուստրի Կիրակնօրեայ վարժարան, Մ. Ն.	112-00
Հայ կին Ակուսր Պոսթոնի, Մ. Ն.	300-00
Տիար Արշակ Աւետիսեան, Մ. Ն.	225-00
Տիկ. Մաքրուհի Միֆայէլեան, Մ. Ն.	112-00
Տիար Ստեփան Բանիկեան, Աստրալիա	60-00
Օր. Թէրեզա Թարայեան, Մ. Ն.	112-00
Տիար Վահրամ Պոյանեան, Մ. Ն.	450-00
Տէր եւ Տիկ. Վ. Տարեան	112-00
Երէցիկն վարդանուշ Ազգեան, Մ. Ն.	112-00
«Տէր եւ Տիկիններու» Ակուսր, Լօրէնս, Մ. Ն.	112-00
Տիար Ֆիլիփ Տէրտերեան, Պրագիլ	240-00
Տիկ. Էլիզապէթ Պերպէրեան, Մ. Ն.	420-00
Տիկ. Թագուհի Գալլպեան, Մ. Ն.	112-00
Տէր եւ Տիկ. Ն. Ազարեան, Մ. Ն.	112-00
Տիար Գեորգ Գաւազտրեան, Մ. Ն.	224-00
Օր. Արմինէ Յակոբեան, Մ. Ն.	112-00
Տիար Նշան Շիմշիրեան, Մ. Ն.	112-00
Տէր եւ Տիկ. Նուպար Կաշիկեան, Մ. Ն.	117-00
Տիար Շօրիկեան, Մ. Ն.	43-00
Տիար Արքուր Մուրատ, Մ. Ն.	117-00
Կիրակնօրեայ վարժարան Մաքրամէնթօյի, Մ. Ն.	117-00
Տիկնանց Միւրքիւն Մաքրամէնթօյի, Մ. Ն.	234-00
Երիտ. Տիկնանց Միւրքիւն Ուստրի, Մ. Ն.	234-00
Օր. Էլիզապէթ Շամիրեան, Մ. Ն.	103-00

Տիար Լեւոն Պօզեան, Մ. Ն.	234.00
Տէր եւ Տիկին Զարլի Պօյանեան, Մ. Ն.	234.00
Տիար Եղուարդ Աէփէրեան, Պ. Այրէս	4500.00
Տէր եւ Տիկ. Եղուարդ Գազանեան, Մ. Ն.	113.00
Օր. Ալիս Յովսէփեան, Մ. Ն.	120.00
Տիկ. Մարթա Կենարաու, Մ. Ն.	120.00
Տիար Լէրրի Կարապետեան, Մ. Ն.	120.00
Տէր եւ Տիկ. Գ. Գասպարեան, Մ. Ն.	145.00
Մի Ոմն, Սահրամէնքօ, Մ. Ն.	37.00
Մի Ոմն, Սահրամէնքօ, Մ. Ն.	48.00
Հայ Ամերիկեան Վերերաններ, Մ. Ն.	240.00
Ս. Յովհ. Եկեղեցի Միլիօֆիի, Մ. Ն.	305.00
Տիկ. Ռօզ Գալայեան, Մ. Ն.	125.00
Տիար Եղուարդ Փանոսեան, Մ. Ն.	9800.00
Տիար Զարեհ Պտուկեան, Մ. Ն.	1225.00
Համասերաստահայոց Վերջ. Միութիւն, Մ. Ն.	1480.00
Տիար Վահան Պէլոեան, Մ. Ն.	120.00
Տիար Ճան Բաշայեան, Մ. Ն.	105.00
Տիար Ստեփան Բանիկեան, Աստորլիա	40.00
Տիկ. Սօֆիա Պէլիկն, Գանատա	100.00
Հայ Կին Ակուսք. Պոսթոն, Մ. Ն.	230.00
Կրտսեր Տիկնանց Միութիւն, Սահրամէնքօ, Մ. Ն.	115.00
Կրտսեր Տիկնանց Միութիւն, Պոսթոն, Մ. Ն.	115.00
A. C. Y. O. Ռիչմոնտ, Մ. Ն.	120.00
Տիար Մարկոս Թաշեան, Մ. Ն.	245.00
Տէր եւ Տիկ. Պարզեա եւ Արքիմէ Պապսեան, Մ. Ն.	495.00
Հ. Բ. Ը. Մ. Թորոսեան Հիմնադրամ, Մ. Ն.	4970.00
Հայկական Բանկորոմեան Ընդհանուր Միութիւն, Մ. Ն.	21,770.00
Տիկ. Նատիա Էրմարգարեան, Մ. Ն.	100.00
Գորակէօզեան Հիմնարկութիւն, Մ. Ն.	4500.00
Տիար Հայկ Գավուզեան, Մ. Ն.	1840.00
Տիար Ճօրն Կփիկեան, Մ. Ն.	130.00
Տիկ. Մէրի Էջօյեան, Մ. Ն.	230.00
Կերակօրեայ Վարժարան, Սան Ֆրանցիսքօ, Մ. Ն.	180.00
Տիկ. Լուսիա Յակօբովիչ, Պ. Այրէս	135.00
Տիկ. Ազատուհի Պէֆարեան, Պ. Այրէս	70.00
Տիկ. Նուսեմ Էսայեան, Պ. Այրէս	110.00
Տիկ. Մարիամ Բարսեղեան, Պ. Այրէս	70.00
Հայ Կեղեցասիրաց Եղբայրակցութիւն, Պ. Այրէս	110.00
Տիար Սեդրակ Փաշանեան, Պ. Այրէս	40.00
Տիկ. Սրբուհի Գիրազեան, Պ. Այրէս	35.00
Տիար Ճօն Յովսէփեան, Մ. Ն.	94.00
Տիար Կոպեանիկ Աէփէրեան, Ֆրանսա	4000.00
Կերակօրեայ Վարժարան Ս. Յովակիմ Աննա Եկեղեցւոյ, Սան Ֆրանցիսքօ	290.00
Տէր եւ Տիկ. Հրսեղ եւ Այտա Տէօլէրեան, Գարնգաս	275.00
Տէր եւ Տիկ. Պատրիկ եւ Լուսի Այնէպեան, Գարնգաս	690.00
Տիար Վարդգէս Նրէցեան, Գարնգաս	137.00
Տիար Զարեհ Գըլբըրտեան, Գարնգաս	275.00

Տիար Գրիգոր Ղազարեան, Գարագառ	275-00
Տիար Ղազար Ղազարեան, Գարագառ	137-00
Տիար Կարօ Պետուչեան, Գարագառ	275-00
Սիմիոնեան Եղբարք, Գարագառ	275-00
Տիար Վարուժան Ղազարեան, Գարագառ	137-00
Պէֆաբեան Եղբարք, Գարագառ	275-00
Yamile de Abelaid, Գարագառ	137-00
Lilliana de Lupi, Գարագառ	137-00
J. M. Callaos, Գարագառ	137-00
Տիար Առաքել Ղազարեան, Գարագառ	137-00
Jerge Knefary, Գարագառ	137-00
R. H. Salazar, Գարագառ	137-00
Տիար Սարգիս Ազատալեան, Գարագառ	275-00
Տիար Ստեփան Տէօվլէրեան, Գարագառ	137-00
Տիար Մանուէլ Պէրպլէրեան, Գարագառ	137-00
Նուպար եւ Ճան Այնէազեան, Գարագառ	275-00
Տիար Մովսէս Պետրոսեան, Գարագառ	137-00
Տիար Մանուէլ Կիրակոսեան, Գարագառ	137-00
Lutz and Ana Donart, Գարագառ	275-00
Eurelio Pauza Gouiez, Գարագառ	137-00
John Kent, Գարագառ	137-00
Կիւլտիւնիկեան Հաստատութիւն 1973—74 տարեշրջանի յատկացումքն առ հաշիւ	1000-00
Տէր և Տիկ. Միհրան և Ռօզմէրի Հոբրամազեան, Մ. Ն.	450-00
Երուսաղէմի Քաղաքացեալարան	3900-00
Էստէֆան Եղբարք, Լոնտոն	430-00

Համագումար՝ 104-764-30

Գլխաւորական տարեկակի առիթով շնորհակալութեան և երախտագիտութեան մատուցող խօսք ունինք շարք մը մեծարգոյ անձնաւորութիւններու և կազմակերպութիւններու, որոնք նութեական-բարոյական-գործնական լայն աջակցութիւն ցոյց տուած են մեր կրթական գործին և որոնց անուններուն առջեւն չենք կրնար լռութեամբ անցնիլ :

Որդիական շատ սրտաղին զգացումներով և երախտագիտութեամբ կը յիշատակենք աւունք մեր շատ սիրեցեալ և պատուական Վեհափառ Հայրապետին՝ Ամենայն Հայոց Սրբազնապօսչն Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Առաջինին, որուն սէրն ու զուրգուրանքը շրայրօրէն կը վայելէ մեր Վարժարանը : Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ մենք ամէն տարի կանոնաւորաբար կը ստանանք մօտ 500 անդլիական սթիբլին Լոնտոնի Արգարեան կոտակի յանձնախումբէն :

Շնորհակալութեան խօսքեր ունինք Հայրական Բարեգործական Ընդհ. Միութեան և

անոր վեհապետ Երանապետին՝ Տէր և Տիկին Ալեք Մանուկեաններուն և Ալեք Մանուկեան Հաստատութեան, որոնք պարբերաբար մեծապիտանք նուիրատուութիւններով կը վստահեն մեր Վարժարանի բացը, միշտ ալ հանգիտանալով մեր անակապական նուազումներուն ապահով ապաստանարանը : Ինչպէս կը տեսնէք, Հայրական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը բնդատաջելով մեր խնդրանքին, այս տարի Իսր. 24,750 լիբրօղի (5000 ամար) բացատիկ նուիրատուութեամբ մը փակած է մեր զգլխաւորական պիւտճէի բացը : Խոկ Ալեք Մանուկեան Հաստատութեանն արդէն յատկացումներ կ'ըլլան հանգստեան կուլուած մեր ուսուցիչներուն՝ ամէն անգամ որ այս նպատակաւ ղիմենք իրենց : Որպէս երախտագիտական արտայայտութիւն մեր Վարժարանէն դատարան մը նուիրուած է Տէր և Տիկին Ալեք Մանուկեան ազգանուէր ամօլին :

Երախտագիտութեամբ կը յիշատակենք

Լիդպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութիւնը, որ, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս 2460 տարրի յատկացում մը բրած է մեր Վարժարանին, որը մեզի կը յոխանցուի ամառնային դպրոցական ամիսներուն:

Ծնորհակալութեան սրտազին խօսք ունինք Evangelische Zentrastelle für Entwicklungshilfe E. V. եկեղեցական կազմակերպութեան, որը առատաձեռն նուիրատուութեամբ կերտեց մեր դպրոցական նոր վերնալարիը, ինչ որ շատ էական հիմնական նըպատ մը եղաւ մեր դպրոցական կեանքին ու բարեկեցութեան համար:

Ծնորհակալութեան ջերմ դրացումներ ունինք Օր. Լիլիա Գարակէօղեանին եւ իրմով զլիաւորուած Հաուրթա Գարակէօղեան Հաստատութեան, Տիթրոյթէն Տէր եւ Տիկին Խուրրա Մարտիկեաններուն, Հիւս. Ամերիկայէն Խուրրա Փանտեանին, Հարուային Ամերիկայէն Խուրրա Սէֆէրեան ընամնիքին եւ Տիար Կոպեռնիկ Սէֆէրեանին: Տըբուած անուններէն իւրաքանչիւրը հաղարական ամերիկեան տղարի տարեկան նուիրատուութեամբ իրենց անունով մէկական դասարան կը պահեն մեր Վարժարանէն ներս: Տրուած այս անուններէն բոլորն ալ շատ ջերմ դրացումներով ու խորին երախտագիտութեամբ կ'ողջունենք իրենց նիւթական նպատակն անցին, մանաւանդ Վարժարանիս հանդէպ իրենց կողմէ ցոյց տրուած սիրոյն եւ գուրդուրանքին համար, որը մեզի համար քաջախերանքի անհուն աղբիւր է:

Ծնորհակալութեամբ մանաւոր կերպով կը յիշատակենք Հարուային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բարդէն Արք. Ապատեանը, Սան Բարուայէն Տիար Անդրէաս Ընֆէրեանը, Գարագասէն Տիար Պատրիկ Այնէպեանը, որոնք հակառակ արտեալ տաղանկներով բեռնաւորուած իրենց կեանքին, ժամանակ կը գտնեն իւրաքանչիւրը իր շքանակէն ու քաղաքէն ներս կազմակերպելու մեր Վարժարանի անտեսական օգնութեան գործը ու կրթական խանդա-

լատութեամբ յարակելով նաեւ իրենց բարեկամները՝ ամէն տարի մեր դպրոցին կը հասցնեն շատ դնահատակի նպաստ մը:

Ծնորհակալութեան եւ երախտագիտութեան մեծագոյն բաժին մը ունինք նաեւ Ձեզի, Ս. Աթոռիս արժանընտիր Գահակալիդ՝ Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր, Ձեր հայրական ջերմ հոգածութեան եւ գուրդուրանքին համար զոր ունիք Ս. Թարգմանչաց այս կրթական տունին եւ անոր աշակերտութեան նկատմամբ, ինչպէս նաեւ որդիական շնորհակալութիւն անձնապէս մեր կողմէն անոր համար որ մեր նուստուութեան յոտահած էք տարիներէ ի վեր Ս. Աթոռոյ ամենէն կարեւոր կրթական այս գործը:

Ձերդ Ամենապատուութեան հայրական բողոք հոգանին, քաջախերութիւնն ու մրտահոտութիւնը խոր դրաւականներ են մեզի համար, որ մենք ալ մեր կարգին բնենք մեր կարելի ծառայութիւնը՝ շուտագոյնս արժեքներու համար ցոյց տրուած այդ տարի ու հայրական հոյանաւորութիւնը, ինչպէս նաեւ յայն քաջախերանքը զոր երբէք չէք զլացած մեզի:

Տեղեկագրիս վերջաւորութեան Ձերդ Արքայութեան կը ներկարացնեմ տարւոյս մեր 14 շնորհալի շքանաւարաններ ու յատաջողէմ աշակերանները, որպէսզի Ձերդ օրհնարեք աջով բաշխէք անոնց միկայականներն ու մրցանակներն ու Ձեր հայրական քաջախերական խօսքով ու աղօթքով քաջախիւրէք եւ օրհնէք մեր կրթական տունը, պաշտօնեաներն ու աշակերտութիւնը:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն  
Որդիական խանարհութեամբ  
Կիւրեղ Մ. ՎրԳ. ԳԱՅԻԿԵԱՆ  
ՏԼԱՈՆՉ

Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի

15 Յունիս 1974

